ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2564-Ա « 18 » մայիսի 2026թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 7-Ի Հ.579-Ա ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու 2026 թվականի մայիսի 7-ի հ.579-Ա որոշման համաձայն՝ Երևան քաղաքի ավագանին տվել է իր համաձայնությունը «Կոֆֆենետ» ՍՊԸ-ից՝ որպես նվիրատվություն ընդունել սեփականության իրավունքով ընկերությանը պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.06072023-01-0296 և հ.06072023-01-0059 վկայականներ), Իսահակյան փողոց հ.7 հասցեում գտնվող 19,5քմ մակերեսով շինությունը և Նալբանդյան փողոց 23/1 հասցեում գտնվող 20,0քմ մակերեսով շինությունը, «Արարշին Գրուպ» ՍՊԸ-ից՝ որպես նվիրատվություն ընդունել սեփականության իրավունքով ընկերությանը պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.07032019-01-0327, հ.07032019-01-0326 և 07032019-01-0320 վկայականներ), Իսահակյան փողոց հ.3/3 հասցեում գտնվող 111,65քմ մակերեսով շինությունները, Իսահակյան փողոց հ.3/4 հասցեում գտնվող 33,0քմ մակերեսով շինությունը և Իսահակյան փողոց հ.3/5 հասցեում գտնվող 23,34քմ մակերեսով շինությունները:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ և 597-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի հ.463-Ն և 2026 թվականի մայիսի 7-ի հ.579-Ա որոշումները.

1.Լիազորել Կենտրոն վարչական շրջանի ղեկավարին՝ Երևանի քաղաքապետի անունից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, «Կոֆֆենետ» ՍՊԸ-ի և «Արարշին Գրուպ» ՍՊԸ-ի հետ կնքել նվիրատվության պայմանագրեր՝ Իսահակյան փողոց հ.7 հասցեում գտնվող 19,5քմ, Նալբանդյան փողոց 23/1 հասցեում գտնվող 20,0քմ մակերեսով շինությունների և Իսահակյան փողոց հ.3/3 հասցեում գտնվող 111,65քմ մակերեսով շինությունների, Իսահակյան փողոց հ.3/4 հասցեում գտնվող 33,0քմ մակերեսով շինության և Իսահակյան փողոց հ.3/5 հասցեում գտնվող 23,34քմ մակերեսով շինությունների համար:

2.Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված նվիրատվության մասին պայմանագրերը ենթակա են նոտարական վավերացման, իսկ դրանցից ծագող իրավունքը՝ պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեում:

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246